ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 43-Լ

«19» 05 2025թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի «ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 54 ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 87 ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 44 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2018 թվականի ապրիլի 26-ի «Դատախազների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի օգոստոսի 1-ի N 54 7 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 87 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 44 հրամանի 2-րդ հավելվածը լրացնել 312-341-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

« ***«Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենք***

312) Հանձնումը որպես միջազգային-իրավական համագործակցության ինստիտուտ.

313) Հանձնման և դատապարտյալների փոխանցման ինստիտուտների տարբերությունը.

314) Հանձնման ընթացակարգին օժանդակող անձինք, նրանց իրավունքներն ու պարտականությունները.

315) Հանձնման ընթացակարգին մասնակցության անհնարինությունը.

316) Օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված անձանց հանձնման ընթացակարգը.

317) Անչափահասների հանձնման առանձնահատկությունները.

318) Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում հայտնաբերված անձանց Հայաստանի Հանրապետությանը հանձնման կարգը, հանձնման մասին հարցման ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները.

319) Անձի հանձնման համար երաշխիքներ և լրացուցիչ տեղեկություններ պահանջելու ընթացակարգերը.

320) Հանձնումը մերժելու հիմքերը և հետևանքները.

321) ՀՀ քաղաքացիությունը՝ որպես հանձնումը մերժելու հիմք.

322) Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերված անձի հանձնման գործընթացի առանձնահատկությունները՝ ապաստանի, փախստականի կարգավիճակի կամ չվերադարձելիության սկզբունքի կիրառման համատեքստում.

323) Հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու մասին Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի որոշման վերանայման կարգը.

324) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց հետաքննության մարմին ներկայացնելու կարգը.

325) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալման կարգը.

326) Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված անձի իրավունքները.

327) Ձերբակալման իրավաչափությունը վիճարկելու կարգը.

328) Նախքան հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնից հարցումն ստանալն անձին ժամանակավոր կալանավորելը.

329) Հանձնման նպատակով կալանավորելը, կալանավորման ժամկետը երկարաձգելը և փաստացի հանձնման նպատակով կալանավորելը.

330) Քրեական վարույթը Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին փոխանցելու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ձերբակալման և կալանավորման կարգը.

331) Հայտնաբերված անձի ձերբակալման իրավաչափությունը վիճարկելու բողոքի, ժամանակավոր կալանավորման, հանձնման նպատակով կալանավորման, հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու, միջնորդությունների քննարկմամբ կայացված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի և դրանց դեմ բերված բողոքների քննության արդյունքով կայացված դատական ակտերի վերանայումը.

332) Միջնորդությունների և բողոքների քննության կարգը և ընթացակարգը, դատական նիստում որոշում կայացնելու կարգը.

333) Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալված կամ կալանավորված անձին ազատելը.

334) Հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները.

335) Դատավարական սանկցիաների կիրառման հիմքերը և տեսակները.

336) Քրեական վարույթներով իրավական օգնության սկզբունքները, ընդհանուր պայմանները.

337) Իրավական օգնության շրջանակներում կենտրոնական մարմինները.

338) Իրավական օգնության մասին հարցումների կատարման ընդհանուր պայմանները (միջազգային պայմանագրի առկայության, ինչպես նաև բացակայության դեպքում).

339) Իրավական օգնության մասին հարցման ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները.

340) Իրավական օգնության մասին հարցումների տեսակները և դրանց կատարման առանձնահատկությունները.

341) Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչումը Հայաստանի Հանրապետությունում՝ ըստ ներպետական օրենսդրությամբ նախատեսված կարգավորումների:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ